

**ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԵՎԱՇԵՐ ՎԱԶԳԵՆՅԱՆ
ՀՕԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՑՈՒՄ**

Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանցոց փեսչության, համձին փեսուչ Տ. Գարեգին արեդա Դարությունյանի, և կրթօջախի հոգեբանության դասախոս Կամո Վարդանյանի նախաձեռնությամբ, սույն թվականի նոյեմբերի 16-ին դպրանցում «Անձի հոգևոր խորհուրդը և հոգեբանական էությունը» թեմայով կազմակերպվել էր աստվածաբանական-հոգեբանական գիրածողով՝ նվիրված զույգ բնագավառների արդիական մի շարք հարցերի։ Գիրածողովին զեկուցումներով իրենց մասնակցությունը բերեցին Վազգենյան Հոգևոր Դպրանցի, Գևորգյան Հոգևոր Ծեմանանի, ԵՊՀ-ի, Մաշղոնցի անվան համալսարանի, Խ. Արովյանի անվան մանկավարժական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան օպար լնգուների ինստիտուտի 10 ուսանողներ։

Այս սեմինարը դպրանոցի՝ աշխարհիկ ուսումնական հասդարպությունների հետ առաջին համարել ձեռնարկն էր, որ նախագակ ուներ համանան խնդիրների նկազմամբ փարբեր դիսաններից իրենց դիրքորոշումներն ունեցող երիքասարդներին շփվելու և կարծիքներ փոխանակելու առիթ ընձեռել, որով և հնարավորություն էր սրբեղձված առնչակից մի շարք խնդիրներ դիմել ապագա աշխարհական գիտնականի ու հոգևոր սպասավորի աջքերով միաժամանակ, ինչպես նաև զեկուցումների ընթացքում ծագող հարցերի պարասիսները սրբանալ զեկուցողներից և ներկա փորձառու հոգևորականներից ու հոգեբաններից:

Ասրվածաբանական-հոգեբանական գիրական նստաշրջանը, որ նվիրված էր Տայապահի քրիստոնեացման և Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման հորելյաններին, բացվեց միասնական աղոթքով, որից հետո դպրանոցի «Լուսավորիչ» երգչախոմբը հանես նկալ հոգևոր երգերի կատարմամբ: Քացման խոսքում վետառչ Տայր Սուրբն ասաց.

«Միավոր ուսանողներ և հարգելի հյուրեր,

Ողունում ենք ձեզ *Անահի Վազգենյան* Ռուսութ մեր այս Դպրանցի հարկից և կարծիք բարի զայտուալ մադթում բողոքի:

Մեծ ուրախություն է մեր դպրանոցի ուսանողության և ղեկավարներին համար այսօր, այս չափազանց հետքարքրական գիտական նստաշրջանի առթիվ հյուրընկալելու ձեզ Սեանա վանքի այս կրթօջախում։ Մեր ուրախությունը կրկնապատկվում է այն հանգամանքով, որ առաջին անգամ լինելով Վազգենյան Շոգնոր Դպրանոցում դեռ է ունենում հոգելոր և աշխարհիկ բուհերից ժամանած ուսանողների միացյալ գիտաժողով, որն անդրադառնալու է մարդու հոգելոր խորհրդին և հոգեկան էությանը։

Սա խկապես մեծ իրադարձություն է մեզ համար, քանի որ ապագա հոգերան-ները և հոգեորոշականներն ահա այսպես միասնաբար պեսք է դիտարկեն և լուսաբանեն մարդ արարածին առնչվող զանազան հիմնախնդիրներ:

Այսօր, առավել քան երբեք, մեր Հայրենիքում և առհասարակ ողջ աշխարհում ցանկացած անհատի համար անհրաժեշտ է գրեներ, հասկանալ և լսրունել մարդու բուն կոչումն այս կանոնուն: Թերեւ երբեւ չի եղել նման դառաշրջան, որ արուան

մնծ թվով լրաբարեսակ ուղղություններ և այսպիս իրարից լրաբերվող ու նոյնիսկ իրար հակասող զաղափարախոսություններ միևնույն ժամանակ մի երկրում լրաբարձր լինեին: Եթե մեկ հպանցիկ հայոց ներենք այսօրվա հասարակությանը, ապա պետք է դեռևսներ, որ գնալով նահանջում է ընդհանրականության բնրությունը ունաք հետքում են լրաբեր կուսակցությունների, նյուններն աղանդավորական խմբակների ազդեցության դրակ են, կան մարդիկ, որոնք սպանդական մեր հայ մշակույթն են պաշտոն, իսկ կան ուրիշներ, որոնք արևմտյան ազարամբության երկրպագուներ են, և այլն, և այլն..

Տարակ է մեկ բան, որ մարդկությունն այսօր իր առջև չունի մեկ օրյուկիվ ուղղություն: Եվ երիտրասարդ սերնդից շատերը դրական են համարում նման «անսահմանափակ» իրավիճակը բանի որ ազարություն կարողանում են դրսելու իրենց անհապականությունը: Իսկ ի լրաբերություն երիտրասարդության՝ ավագ սերնդի ներկայացուցիչներից շատերն ավելի զգուշավորությամբ են վերաբերվում այս խնդրին և հայոց են բարձրացնում, թե կարո՞ն է արդյոք այս դրական բացարձակ ազարությունը և անհապականության պաշտամունքը մարդուն լիարժեք երջանկության հասցնել: Բնականարար, իրենց առջև ունենալով Վրեմություն ազարամբության պարբառով առկա դառը փորձառությունները, անվարանուն են նայում ներկայի բազմամշակութային իրավիճակին և պահանջում են ավանդական համընդհանուր զաղափարախոսության վերականգնում:

Այս մասին որպես քրիստոնյա հոգևորական կարող ենք ասել հետքեալլ:

Ա. Անշուշտ, իբրև անհապականություն դրսելով շատ լավ երևոյթ է, սակայն այն երբեք չպետք է սանձարձակ, սուրյեկտիվ քննահաճության վերածվի:

Բ. Նոյնպես հարկ է նշել, որ համընդհանուր բարոյական և հասարակական արժեքներն անհրաժեշտ են՝ օգնելու մարդկությանը կյանքում ճիշտ ուղղությամբ շարժելու, սակայն դրանք երբեք չպիտի վերածվեն մարդկային զանգվածների կողմից գործադրվող գորշ բունակելության:

Փառք Աստծո, մեզ բոլորին բախսր է վիճակի ապրելու մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ուղղակիորեն դրական մեր երկրի ազարագրությունը խորհրդային կազմանդիք համակարգից: Այժմ անցել են այն ժամանակները, երբ ասկվածարանությունը խավարամբություն էր համարվում, իսկ հոգևորությունը և հոգեթերապիան՝ բուրժուական արժեքները: Այժմ, սիրելի ուսանողներ, դրեին է ունենում հարացոյցի փոփոխություն: Դառնալով հոգեթաներ, հոգևորականներ կամ այլ գիտությունների մասնագետներ՝ Դուք պետք է ինքներդ ուղղություն ցույց լրաբ խորհուրդ փնտրող անձանց և չափանիշներ սահմանեք ապագայում հասարակական կյանքի համար, որպեսզի այդ հաջող ընթանա:

Եվ դրան հասնելու համար ցանկացած հոգևորական և հոգեթան պետք է նախատաշ իր համար հարակ կերպով սահմանած լինի. ո՞վ է առհասարակ մարդ արարածը, ո՞րն է նրա կյանքի խորհուրդը և որո՞նք են նրա ներքին, էական հարկանիշները: Մարդու մասին ահա այս հիմնական գիտելիքն անհրաժեշտ է մեզ բոլորին, որպեսզի այդ հիմքի վրա կարողանաք կառուցել մեր այսօրվա անհապական և հասարակական կյանքը:

Ես վարդակ եմ, որ այսօրվա մեր համեստ զիրաժողովն իր դրական ազդեցությունը պետք է ունենա, այն առումով, որ հոգեբանության արդի ձևորերուն ները և շուրջ 2000 տարիների ընթացքին եկեղեցական հայրերի կողմից մշակված ասլուածաբանությունը մեր հոգերը և աշխարհիկ ուսումնական հաստատությունների սաներին հարուստ զինանոց են փոխանցելու»:

Նիստի Ա բաժնում, որը վարում էր դադարձվական հոգեբան, դպրանցում հոգեբանության դասախոս Կամ Վարդանյանը, ընթերցված առաջին թեման էր՝ «Ասվծո պատկերը և նրա շեղումն անձի հոգեկանում»: Բանախոսը՝ դպրանցի Դ լսարանի սան Էդգար Պահլուսյանը, ցոյց դրվեց մարդու մեջ Ասվծո պատկերի ձևավորման ընթացքը և կարևորությունը, դրա շեղման պատճառներն ու եեցւանքները, որոնցից մեկը մանկական չափարիթում երեխայի մեջ Ասվծո պատկերի անհսկակ ձևավորումն է, ինչը, ցավոք, մեջ չափով բնորոշ է մեր հասարակությանը՝ պայմանավորված նախկին քաղաքական համակարգի գաղափարախոսությամբ:

Երկրորդ գեկուցման թեման էր՝ «Ներքարքությունների դերը անձի հոգեկանում», որը ներկայացրեց Մաշփոցի անվան համալսարանի հոգեբանության ֆակուլտետի IV կուրսի ուսանողությի Սունա Գրիգորյանը: Զեկուցողն առանձնապես կարևորեց մարդու հետաքրքրությունների դերը հարկած ապագայի ծրագրերի և սրեղծագործական ունակությունների դրսուրման ժամանակ:

Նաշորող Վազգենյան Նովոր Դպրանցի Դ լսարանի սան Սպելիան դայիր Սահերադյանն «Հուզերը և զգացմունքները մարդու հոգեկանում» գեկուցումն էր, որում փորձ արվեց ներկայացնելու քրիստոնեական երեք մեծագոյն առաքինություններով՝ հավաքով, հոյսով ու սիրով լցված մարդու հոգեկան կեցվածքը և այդպիսի մարդու դիրքորոշումը կյանքի բազմազան հանգամանքների հանդեպ:

Չորրորդ բանախոսությունը խորագրված էր՝ «Միջանձնային հարաբերություններն ու կոնֆիդենտուրը»: Ըստ ընդունված գետության՝ դասարանում բարձր առաջադիմություն հնարավոր է միայն կոնֆիդենտների լիակատար բացակայության դեպքում, սակայն զեկուցողը՝ ԵՊՀ-ի հոգեբանության ֆակուլտետի մագիստրագուրայի Ի կուրսի ուսանողությի Արմինե Օհանյանը, դարձեր դասարանների աշակերտների շրջանում իր կարարած դիրքարկումների հիման վրա հանգել էր այն եղանակացության, որ հնարավոր է նաև հակառակը՝ կոնֆիդենտների առկայության դեպքում բարձր և բացակայության դեպքում նաև ցածր առաջադիմության առկայությունը:

Ա բաժնի վերջին գեկուցման թեման էր՝ «Հիպնոսը որպես հոգեթերապիայի յուրահագույն մեթոդ»: Խ. Արովյանի անվան մանկավարժական համալսարանի IV կուրսի ուսանողությի Հայկուսի Ավելիխյանն ուրվագծեց որոշ մեթոդներ և սկզբունքներ, որ կիրառում են հոգեբուժության այս ուղղության մասնագետները՝ օգնելու հիվանդին կամ այցելուին:

Բ բաժնի առաջին գեկուցումն էր՝ «Խնճնասպանության հոգեբանական ասպեկտները»: Խ. Արովյանի անվան մանկավարժական համալսարանի V կուրսի ուսանողությի Անյուքա Մարգարյանը ներկայացրեց այն հիմնական պատճառները, որ վերաճելով հիվանդագին ասպիճանի՝ անհարին մղում են իրեն զրկել Ասվծո մեծագոյն պարզեցից: Նյութը պարբառվել էր ազարագրվածների շրջանում ուսանողություն կարարած ուսումնասիրության արյունքների հիման վրա:

Նոյն երևոյթի հոգևոր կողմին էր անդրադարձել դպրանոցի Դ լսարանի սան Սամվել դափիր Հարությունյանը՝ «Ինքնասպանության հոգևոր ասպեկտները» վերնագրված բանախոսության մեջ: Քրիստոնեական վարդապետությունն ինքնասպանությունը համարում է ասրբվածքներն, ուստի որքան էլ փորձենք, միևնույն է՝ ինքնասպանին արդարացնելու լուրջ ու համոզիչ փասբարկներ չեն գրնվի: Ռուսակարության այս ծայրագույն ասքիհանին հասած անձինք կորցնում են ինքնավերահսկումը և կամավոր կերպով զրկվում անդենականում շնորհվելիք վարձից՝ իրու հափուցում այսրաջիսարհային փառապանքները և դժվարությունները հաղթահարելու: Այդպիսի մարդկանց վրա արգելված է կարգ կապարելը, ինչպես նաև հոգեհանգստյան աղոթքով Ասպծո ողորմությունը հայցելը:

«Անհափական խոսքովանողի հոգեկան ապրումները» թեմայով զեկուցում կարդաց Վազգենյան Հոգևոր Դպրանոցի Դ լսարանի սան Վարդան դափիր Սարոյանը: Մեր Եկեղեցին, ինչպես հայրնի է, մեղքերի հավաքական խոսքովանությունից զարդ ունի նաև անհափական, առանձին, այսպես կոչված՝ «ականջին ասվող խոսքովանության» ավանդույթը: Թե ինչպիսի ապրումներ է ունենում մարդը, որ իր հոգին բացում է հոգեորականի առաջ, փորձ արքեց ներկայացնել այս բանախոսության մեջ:

Վ. Բրյուսովի անվան օպար լեզուների ինսպիրույթի Վ կուրսի ուսանողութիւն Արմին Բաղդասարյանի «Երևակայությունը որպես բարձրագույն իմացական գործընթաց» զեկուցման մեջ շեշտվեց այս միտքը, թե մարդկության առաջընթացը թերևս չունենար այն թափիր, եթե մարդը գորկ լիներ իր այս հափկությունից: Անձնական մակարդակի վրա ևս երևակայությունը խթանիչ ներգործություն ունի, եթե այն առողջ է, և մարդը չի դարձել իր երևակայության «քնակիչը»:

Վերջին բանախոսությունը՝ «Ստիգմաների (Վիրանշանների) մասին» Ասպվածաբանական-հոգեբանական համառորդ ակնարկ», նվիրված էր մի հարցի, որին մեր Եկեղեցական մասինագրությունը գրեթե չի անդրադարձել: Գևորգյան Հոգևոր Ծեմարանի Ե լսարանի սան Արքյուն դափիր Անանյանը, օգտվելով Ուղղափառ և Կաթոլիկ Եկեղեցիների արձանագրած դեպքերի հիշափակություններից, ներկայացրեց Քրիստոսի ունեցած այդ վիրանշանների՝ ջերմնուած հավաքացյաների վրա հայտնվելու փասբերը, ստիգմաների դեսակներն ու դրանք կրողների ապրած հոգեվիճակը:

Նստաշրջանի ավարդին իրենց ամփոփիչ խոսքն ասացին բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոստանդին Դանիելյանը և բժշկական գիտությունների թեկնածու Ժելման Վանունին: Նարզարժան հյուրերն արձանագրեցին հոգևոր կրթօջախների հոգեբանական գիտելիքների գոհացույթի մակարդակը և հետքագայում այսպիսի առիթների վերսպին ընձեռումով գույց բնագավառների ուսանողությանը ինքնային սորուման հնարավորություն դարձու օգտակարությունը: Այս կարգի հավաքները հնարավոր են դարձնում հոգեկանի և հոգեորի հետ կապված որևէ խնդրի նրկողմանի վերլուծությունը, որը կարևոր է հարցի համակողմանի պարզաբանման հայեցակետից:

ՇՈՎՃԱՆՆԵՍՈՒՐԿ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծեմարանի
Զ լսարանի սան